նագոյն հայրենիքը Իրանի բարձրաւանդակն է եղեր։

Ստրաբոն կը յիշէ նաև, թէ անոնք և թէ անոնց մօտիկ Մալա ցեղը ցիրուցան կը բնակէին նաև Արմենիայի լեռները. Ուրեմն Բրս.ի Ս. Դարուն, անոնք արդէն բնակակից եղեր են հայերուն, գոնէ արևելեան և հարաւ-արևելեան սահմաններու վրայ։

Պատմական շրջաններէն արդէն կը յիշուի Մարդ ցեղը Հայաստանի մէջ, և անոնց տեղն ալ իրենց անունով կը կոչուէր Մարդաստան, որ Վասպուրականի Գաւառներէն մէկն էր Հեր՝ Մահմուտիէի շուրջը։

Երկոր ատեն ոչինչ կը յիշուի այս լեռնարնակ, վայկատուն և աւազակաբարոյ ժողովուրդի մասին հին մատենագիրներու մէջ. մինչև որ միջին դարուն՝ յիշատակութիւն կը լինի անոնց համար, որոնցմէ կարելի է հետևցնել, թէ անոնք իրրև խնդնարած ժողովուրդ, հետևելով Պարսկաստանի արևմտեան սահմանները տարածուող Զագրոս լեռնաշղթայի ընթացքին, դարերու ընթացքին, տարածուեցան դէպի արևմուտք և դէպ ի հիւսիս—Արևմուտք։ Նոյն ատեն անոնց բնակավայրի սահմանը կը ցուցնեն հարաւէն Կրաք. արևելքէն Խուժաստան, հիւսիսէն Ատրբէջան և Արմենիա. իսկ Արևմուտքէն Տիարպէքիր։ Ներկայիս անոնց բնակավայրը շատ աւելի ընդարձակ է, քան թէ վեր յիշուածը։

Քիւրդ ժողովուրդը մերձաւոր ցեղակցութիւն ունենալով Մարիբա, Պարսիկներու և Իրանի ուրիշ ցեղերու հետ՝ անտարակոյս ժամանակի ընթացքին, ինչպէս և ներկայ բոլոր ժողովուրդները, աւելի կամ սակաւ չափով ձուլեր են իրենց մէջ ուրիշ շատ ազգերու անհատներ։

Մանաւանդ Մահմետականութեան շրջանին շատ մեծ տո-

անունը կը նոյնանար վայրենի, աւազակ և աւարառու բնազդներու հետ։ Քիւրդերը ցած և ստորադաս մարդկանց նաև Կուռօ կ'ըսեն. որ գուցէ (Kuru) ըսուած անոնց մէկ ցեղի անունովն ըլլայ։

Յ. Շ.